



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱԿԵՆՏՐԻ ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔ

ԱՆՈՂՆԱՀԱՐ ԵՎ ՈՂՆԱՀԱՐԱՎՈՐ ԿԵՆԴՐԱԿԵՆՏՐ

*Երկրորդ հրատարակություն*

ԵՐԵՎԱՆ 2010



# THE RED BOOK OF ANIMALS OF THE REPUBLIC OF ARMENIA

INVERTEBRATES AND VERTEBRATES

*Second edition*

YEREVAN 2010

ՆՏԴ 591.5  
ԳՄԴ 28.681  
Ն 247  
ՀՀ Կարմիր գրքի հրատարակման աշխատանքները իրականացվել են Բնության պահպանության միջազգային միության (IUCN), Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (UNDP), Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) ֆինանսական աջակցությամբ:  
The Red Data Book of the Republic of Armenia was published due to financial support provided by the International Union for Conservation of Nature (IUCN), World Wide Fund for Nature (WWF) Armenian branch, UN Development Programme (UNDP) and German Society for Technical Cooperation (GTZ).

Պատասխանատու խմբագիրներ՝ **Ա. Աղասյան** (ողնաշարավոր կենդանիներ), **Մ. Քալաշյան** (անողնաշար կենդանիներ)  
Editors: **A. Aghasyan** (vertebrates), **M. Kalashyan** (invertebrates)

Հրատարակության համակարգող՝ **Տ. Դանիելյան**  
Publication Manager: **T. Danielyan**

Տեխնիկական խմբագիր՝ **Ի. Խորոզյան**  
Technical editor: **I. Khorozyan**

Պատասխանատու քարտուղար՝ **Ն. Խաչատրյան**  
Secretary: **H. Khachatryan**

Տվյալների համակարգչային բազաների լրացնողներ՝ **Ս. Ամիրյան, Գ. Կարազյան, Դ. Վասիլյան**  
Compilation of computer databases: **S. Amiryanyan, G. Karagyan, D. Vasilyan**

### ՆԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄ/AUTHORS

**Անողնաշար կենդանիներ.** Կ. Աղաբաբյան, Վ. Անանյան, Ա. Ավետիսյան, Զ. Բադալյան, Ա. Դանչենկո, Ն. Խաչատրյան, Ն. Նակոբյան, Ա. Նամբարձումյան, Լ. Նարությունովա, Վ. Նովիաննեսյան, Մ. Մարջանյան, Լ. Միրումյան, Մ. Քալաշյան, Գ. Կարազյան

**Invertebrates:** K. Aghababyan, V. Ananyan, A. Avetisyan, J. Badalyan, A. Danchenko, N. Hakobyan, A. Hambardzumyan, L. Harutyunova, V. Hovhannesian, M. Kalashyan, G. Karagyan, H. Khachatryan, M. Marjanyan, L. Mirumyan

**Օղնաշարավոր կենդանիներ.** Կ. Աղաբաբյան, Ա. Աղասյան, Լ. Աղասյան, Ս. Ամիրյան, Վ. Անանյան, Բ. Գաբրիելյան, Ֆ. Դանիելյան, Ե. Եղիազարյան, Տ. Թամազյան, Ս. Թումանյան, Ն. Խաչատրյան, Ի. Խորոզյան, Ն. Նարությունյան, Ն. Մարգարյան, Ե. Յավրույան, Լ. Ջանոյան, Լ. Սահակյան, Լ. Սրեփանյան, Մ. Քոչարյան, Մ. Քոչինյան

**Vertebrates:** K. Aghababyan, A. Aghasyan, L. Aghasyan, S. Amiryanyan, V. Ananyan, F. Danielyan, E. Eghiazaryan, B. Gabrielyan, H. Harutyunyan, L. Janoyan, H. Khachatryan, I. Khorozyan, M. Kocharyan, M. Kochinyan, N. Margaryan, L. Sahakyan, L. Stepanyan, T. Tamazyanyan, S. Tumanyan, E. Yavrutyanyan

Ն 247 Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք: Անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ: /Կ. Աղաբաբյան, Վ. Անանյան, Ա. Ավետիսյան և ուրիշ.- Եր.: ՆՆ բնապահպանության նախարարություն, 2010.- 368 էջ:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը (Անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ) պարունակում է անողնաշար և ողնաշարավոր կենդանիների տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, կենսաբանության, սահմանափակող գործոնների վերաբերյալ տեղեկություններ: Առաջարկվում են պահպանության միջոցառումներ: Անհետացման վտանգի փորձագիտական գնահատականը կատարվել է ըստ Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կատեգորիաների և չափանիշների: Յուրաքանչյուր տեսակի համար բերվում են լուսանկարներ կամ պատկերանկարներ և տեսակների տարածվածության հատվածային կամ կետային քարտեզներ:

Գիրքը նախատեսված է բնապահպանության ոլորտի կառավարման համակարգի աշխատակիցների, կենսաբանների, էկոլոգների, բնօգտագործողների, ուսանողների, դպրոցականների և այն բոլոր անձանց համար, ովքեր հետաքրքրված են Հայաստանի կենսաբազմազանության պահպանության խնդիրներով:

The Red Book of Animals of the Republic of Armenia (invertebrates and vertebrates) contains information about status, distribution, biology and limiting factors related to invertebrates and vertebrates. Conservation measures have been proposed. The expert assessments of species status were carried out in compliance with the International Union for Conservation of Nature (IUCN) categories and indicators. Each species account comprises a photograph or a picture and a polygon or dot map.

The book is intended for conservationists, biologists, ecologists, environmental managers, students, schoolchildren and all those interested in preservation of Armenia's biodiversity.


ՆՏԴ 591.5

ԳՄԴ 28.681

ISBN 978-99941-2-484-8

© ՀՀ բնապահպանության նախարարություն, 2010 թ.

148. Ընձառյուծ, леопард, leopard — *Panthera pardus* (Linnaeus, 1758)



© ԲՀՀ/Ի. Խորոզյան, Ա. Մալխասյան, Մ. Բոյաջյան  
 © WWF/Ի. Khorozyan, A. Malkhasyan, M. Boyajyan

Ենթատեսակ՝ Կովկասյան ընձառյուծ, *P. p. ciscaucasica* (Satunin, 1914) = պարսկական ընձառյուծ – *P. p. saxicolor* Pocock, 1927  
 Ընդհանրական Կարգավազգիներ, cats — *Felidae*

**Կարգավիճակը:** Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Ենթատեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered EN C2a(i)», իսկ տեսակը՝ «Near Threatened» կարգավիճակով: ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR C2a(i); D:

**Տարածվածությունը:** Արևալը ներառում է Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Արևելյան Թուրքիան, Հարավային Թուրքմենստանը, Իրանը, Աֆղանստանը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնակեցնում է Հարավարևմտյան և Հարավային Հայաստանը՝ «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնական և արևելյան հատվածներից մինչև հայ-իրանական սահմանը՝ Գեղամա, Չանգեզուրի, Վայոց ձորի, Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաների սահմաններում:

**Ապրելավայրերը:** Չոր լեռնատափաստաններ, չորային մոսրանտառներ, հարավային լանջերի լեռնային, ենթալպյան և ալպյան մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Մարգագետիններն օգտագործում է միայն ձմադուրկ ժամանակ տեղափոխվելու համար, քանի որ ձմառածկը կարևոր սահմանափակող գործոն է: Շատ կարևոր է նաև դժվարհասանելի ժայռերի առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ընձառյուծին բեզուարյան այծերին որսալու ժամանակ հանկարծակի դուրս գալու, ինչպես նաև հանգստանալու համար: Որսում են նաև վայրի խոզ, այծյամ, հնդկական մացառախոզ, գորշ նապաստակ: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռածեղքերը, խիտ բփուտները:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում պոպուլյացիայի առավելագույն մեծ թվաքանակը 10–15 առանձնյակ է: Ներկայիս տարածման տարածքը կազմում է 7497,2 կմ<sup>2</sup>: Բնակեցման տարածքը կազմում է 2856,8 կմ<sup>2</sup>: Այն ներառում է մշտական և ժամանակավոր բնակեցման տարածքները և միջանցքները: Մշտապես բնակվում է միայն «Խոսրովի անտառ» արգելոցում (207,9 կմ<sup>2</sup>) և գ. Նոնաձորից դեպի հյուսիս (296,9 կմ<sup>2</sup>) գտնվող տեղամասում գիշատիչը բնակվում է մշտապես: Պոպուլյացիայի նման կառուցվածքի պատճառով այն լիովին կախված է միջանցքների գործառնությունից:

**Վարանգման հիմնական գործոնները:** Արեալի մասնատված լինելը, որի հիմնական պատճառը որսագողությունն ու մարդու տնտեսական գործունեությունն է:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Արևիկ» ազգային պարկում և «Չանգեզուր» արգելավայրում: 2002 թ-ից սկսած WWF հայաստանյան մասնաճյուղը աջակցում է ընձառյուծի պահպանության իրականացմանը և կատարում է տեսակի մոնիթորինգը արեալի սահմաններում:

Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ արեալի մասնատման գործոնը նվազեցնելու նպատակով: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել կերային հարուստ բազա ունեցող բիոտոպների միավորումը խոշոր և մանր պահպանվող տարածքների ցանցում:

Անհրաժեշտ է ուժեղացնել որսագողության, լեռնագործության, ճանապարհաշինության, արածեցման և այլ մարդածին գործունեության հսկողության և կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**Status.** In the IUCN Red List of Threatened Species (ver. 3.1), the species is categorized as Near Threatened NT and the subspecies as Endangered EN C2a(i). According to IUCN criteria categorized as Critically Endangered CR C2a(i); D.

**Distribution.** The range of the subspecies encompasses the Caucasus, Eastern Turkey, Southern Turkmenistan, Iran and Afghanistan.

**Distribution in Armenia.** Inhabits Southwestern and Southern Armenia from the central and eastern parts of Khosrov Forest Reserve southwards to the Armenian–Iranian state border, covering the Geghama, Zangezur, Vayots Dzor, Bargushat and Meghri ridges.

**Habitats.** Arid mountain grasslands, arid sparse forests, mountain grasslands, subalpine and alpine meadows on the southern slopes.

**Biological traits.** As snow cover is an important limiting factor, meadows are used only in the snowless season. Presence of hardly accessible rocky massifs is also a vital requirement, since they allow to hunt on the staple prey, bezoar goats, from ambush and contain numerous shelters. Leopards also prey upon the wild boar, roe deer, Indian crested porcupine and European hare. Caves, crevices and dense scrubs are used by leopards as shelters.

**Population size and its trends.** The maximum possible number of leopards in Armenia is 10–15 individuals. The extent of occurrence is 7497.2 km<sup>2</sup>. The area of occupancy is 2856.8 km<sup>2</sup>, comprising the areas of constant presence and the corridors between them. Only two areas (central and eastern Khosrov Forest Reserve, 207.9 km<sup>2</sup> and the area to the north of the Nrnadzor village, 296.9 km<sup>2</sup>) hold constantly living leopards. This pattern of the population makes it entirely dependent upon the functioning of the corridors.

**Major threats.** The most imminent threat to leopard survival is range fragmentation caused by poaching and other human activities.

**Conservation measures.** Protected in Khosrov Forest Reserve, Shikahogh Reserve, Arevik National Park and Zangezur Sanctuary. Beginning from 2002, Armenian branch of World Wide Fund for Nature (WWF) assists to leopard conservation throughout its range and implements the species monitoring.

It is essential to set measures directed towards the minimization of range fragmentation. Particularly, it is important to encompass the prey-rich habitats into the network of large and small protected areas. It is also important to set stringent control over poaching, mining, road construction, grazing and other human activities.

**Տեղեկատվության աղբյուրներ/References**

Даль, 1954; Красная книга СССР, 1984; Красная книга Армянской ССР, 1987; Khorozyan et al., 2005; Khorozyan, Abramov, 2007; Хорозян, 2008; Gavashelishvili, Lukarevskiy, 2008; Khorozyan, 2007a, b; Khorozyan, 2008; 2010; WWF/ԲՄՄ, 2009; WWF monitoring reports, 2002–2010.

Կազմող՝ Ի. Խորոզյան  
 Compiler. I. Khorozyan